

## ՈՐՈՇՈՒՄ

ԵԹԿՊԻ-ի գիտական խորհրդի 2015թ. մայիսի 11-ի

### նիստի /արձ.5/

1. Հաստատել ԵԹԿՊԻ-ում բակալավրի, մագիստրոսի և ասպիրանտի կրթական ծրագրերով առկա և հեռակա համակարգերում իրականացվող ուսումնական գործընթացի ուսումնական աշխատանքների հաշվարկի նորմերը նոր խմբագրությամբ:

2. Համաշխարհային բանկի կողմից ֆինանսավորված դրամաշնորհի ծրագրի կատարման արդյունքների վերաբերյալ Հ. Ավագյանի զեկույցն ընդունել ի գիտություն,

2.1 հանձնարարել ԵԹԿՊԻ-ի որակի ապահովման կենտրոնի աշխատակազմին առաջիկա դրամաշնորհների մրցույթին մասնակցելու համար կազմել նոր դրամաշնորհի նախագիծ՝ թատերական ֆակուլտետը վերազինելու նպատակով:

3. ԵԹԿՊԻ-ի դեկանի ընտրության կանոնակարգում և բակալավրի ու հետազոտողի կրթական ծրագրերով գործող ուսումնական պլաններում կատարել հետևյալ փոփոխությունները՝

3.1 ԵԹԿՊԻ-ի դեկանի ընտրության կանոնակարգի 5-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «Դեկանի պաշտոնի թեկնածուներն առաջադրվում են ինստիտուտի դոկտորի գիտական աստիճան և/ կամ պրոֆեսորի գիտական կոչում ունեցող ինչպես նաև առնվազն տասը տարվա գիտամանկավարժական աշխատանքի փորձ ունեցող թեկնածուի գիտական աստիճան և/կամ դոցենտի գիտական կոչում ունեցող դասախոսներից»,

3.2 բակալավրի կրթական ծրագրով առկա և հեռակա ուսուցմամբ գործող «Պարարվեստի ռեժիսուրա» մասնագիտության ուսումնական պլանի դասընթացների համակազմից հանել «Դաշնամուր» առարկան,

3.2.1 «Պարարվեստի ռեժիսուրա» մասնագիտության ուսումնական պլանում (առկա համակարգի առաջին կուրսերում) ավելացնել ֆիզիկական դաստիարակություն դասընթացին հատկացված ժամաքանակը՝ դարձնելով շաբաթական 4 ժամ:

3.3 Հիմք ընդունելով ՀՀ-ում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 19-րդ կետը ԺԷ.00.01 «Թատերական արվեստ, կինոարվեստ, հեռուստատեսություն» մասնագիտության հետազոտողի կրթական ծրագրով գործող ուսումնական պլաններից (առկա, հեռակա, հայցորդություն) հանել «Փիլիսոփայություն» առարկայի որակավորման քննությունը և «Ինֆորմատիկա» առարկայի որակավորման ստուգարքը ,

3.3.1. համապատասխան կիսամյակներում առարկաների ցանկում ավելացնել «Փիլիսոփայության պատմություն» առարկան:

4. Արձանագրել, որ դոցենտի գիտական կոչում շնորհելու նպատակով կազմակերպված փակ, գաղտնի քվեարկությունն ընթացել է գործող կանոնակարգի համաձայն և ընթացակարգի խախտումներ չեն գրանցվել,

4.1 հաստատել հաշվիչ հանձնաժողովի արձանագրությունը

4.2 փակ , գաղտնի քվեարկության արդյունքների հիման վրա, ՀՀ գիտամանկավարժական կադրերին պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ շնորհելու կարգի 5-րդ կետի բ) ենթակետի համաձայն ձայների մեծամասնությամբ (23 կողմ, 1 անվավեր) բանասիրական գիտությունների թեկնածու Արմինե Միխայիլ Եղիազարյանին շնորհել դոցենտի գիտական կոչում Ժ.01.03 «Ռուս գրականություն» մասնագիտությամբ և խնդրել ՀՀ ԲՈՀ-ին հաստատել գիտական խորհրդի որոշումը:

5. 2015-2016 ուսումնական տարում ԵԹԿՊԻ-ում սահմանված կարգով կազմակերպել միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների բարձր առաջադիմություն ունեցող շրջանավարտների շարունակական կրթությունը հետևյալ մասնագիտությունների գծով՝

1. 070200 Դերասանական արվեստ – 4 տեղ առկա ուսուցմամբ

2. 071900 Գեղանկարչություն – 3 տեղ առկա ուսուցմամբ

3. 071300 Կինոարվեստ – 1 տեղ առկա ուսուցմամբ

4. 071400 Օպերատորություն – 1 տեղ առկա ուսուցմամբ

5. 071700 Սոցիալ մշակութային գործունեություն - 1 տեղ առկա ուսուցմամբ

Գիտքարտուղար

Գ. Հովհաննիսյան